

**Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան**

Տևողությունը 180 րոպե

Աղամը քշում էր եզներն ու խոռվահույզ անձկությամբ մտաբերում իր հրաշք դրախտը, հեքիաթային պարտեզը՝ ծիածանի շքեղահյուս, ակնապարար գույներով: Բայց խաղաղվեց, երբ հայացքն ուղղեց թավիշ հովիտներում խայտացող նազելաճեմ վիթերին, ծով անդաստաններում վարգող երիվարներին, բարունակ այգեստաններին, զմրուխտ անտառներին, ահագնասես լեռներին, ահեղամռունչ գետերին, ճերմակավարս ջրվեժներին ու լույս աղբյուրներին. չէ՞ որ այդ ամենն իրենն է: Հրճվանքը, սակայն, կարճ տևեց. իսկ եթե մեկը հայտնվի, ինչո՞վ է հաստատելու, որ ինքն է երկրի միահեծան տերը:

Եվ համակված ավելին ունենալու բուռն մարմաջով՝ որոշեց շուտափույթ առաջ գնալ, կտրել անցնել անձայրածիր հորիզոնները:

Նույն պահին ձյունաթույր պատմուճանով մի տեսիլք հայտնվեց՝ պատկառազոր դեմքով: Լռելյայն մոտենալով՝ նա մատնացույց արեց սահմանի քարը. ի վերջո ամեն բան սահման ունի: Աղամն սկսեց հոխորտալ: Իրար քաշքշեցին. անձանոթը գետնեց Աղամին: Վերջինս խեղճացավ, երդվեց չխախտել սահմանը՝ միաժամանակ ընկած տեղից ոտքով թաքուն առաջ հրելով քարը. թող իր հողաբաժինը մի քիչ էլ ավելանա:

Տեսնելով մարդու արարքը՝ անձանոթը դառնացած ասաց.

– ... : Ասաց ու աներևութացավ: Տեսիլքը Աստվածն էր. եկել էր՝ մարդուն փորձելու:

Ասում են՝ այդ օրվանից ...

1. Շարունակի՛ր անավարտ նախադասությունները: (1 միավոր)
2. Գրի՛ր անձկություն, խայտալ, նազելաճեմ, վիթ, վարգել, բարունակ, միահեծան, մարմաջ, պատմուճան, պատկառազոր բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
3. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ ըստ անհրաժեշտության. **առ-նչվել, գիշերուզ-ը, աշտ-ակիր, մեղալ-ն, բար-ցական, անհար-ի, փսփսու-, ջրար-ի, խր-վիլակ, խր-ակասպ մտա-ածին, այծենակա-, ձա-կել, ս-թս-թալ, հայթ-այթել, եղր-անի, ցորնամ-իկ, բա-բիշ, ու-ալար, կ-ճտացնել**: (2 միավոր)
4. Գրի՛ր երեց, լեռնապար, իր, խորշում, վայել բառերի համանուն գույգերը՝ յուրաքանչյուրի կողքին նշելով իմաստները: (1 միավոր)
5. Դո՛ւրս գրի՛ր գոյականով և ածականով արտահայտված 10 մակդրային որոշիչ: (1 միավոր)
6. Դո՛ւրս գրի՛ր տեքստում գործածված բարդածանցավոր բառերը, վերլուծի՛ր բառակազմորեն՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով: (2 միավոր)
7. Կազմի՛ր 5 դարձվածք **աչք** բառով և բացատրի՛ր իմաստները: (2 միավոր)
8. Կազմի՛ր նախադասություններ **տարեգիր - տարագիր, հազվագյուտ-հազվադեպ** հարանուններով: (2 միավոր)
9. Բառերից ընտրված համապատասխան արմատներով և **-ին** վերջածանցով կազմի՛ր 8 ածանցավոր բառ (առանց երկրորդ ածանցի). **ինքնաեռ, կաղնուտ, բանակատեղ, բարձրակարգ, առաջամարտիկ, խորամիտ, գետաբերան, վերձիգ, առանձնակի, նրբագեղ, հետևակ, գետնամած, ստորացուցիչ, կացարան, բավական**: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն **«Իմ երկրի լուսավոր այգաբացը»** վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)